

# Հայ գրականության հանրապետական օլիմպիադայի հարցաշարերի պատասխանները

## IX դասարան

1. «Վարդանի և հայոց պատերազմի մասին» երկի հեղինակը 5-րդ դարի պատմիչ Եղիշեն է, որը եղել է Մաշտոցի 1-ին աշակերտներից: Եղիշեի երկի պատմական հիմքը 451 թվականի Ավարայրի ճակատամարտն է, որին մասնակից և ականատես է եղել պատմիչը: Երկը գրվել է ճակատամարտից անմիջապես հետո(453թ.), բայց ավարտվել է բավականին ուշ՝ մոտավորապես 464 թվականին: Երկը գրվել է Մամիկանյան Դավիթ երեցի պատվերով. Եղիշեն գրում է. «Արդ, որովհետև քո աննախանձ բարք ու բնությունից պատվեր ստացանք, սկսենք, որտեղից արժան է սկսել, թեպետև չէինք հոժարի մեր ազգի թշվառությունը ողբալ: Ահա մեր կամքին հակառակ արտասովոր ողբով շարադրում ենք այն բազմաթիվ հարվածները, որոնց մեջ հենց մենք էլ ընկանք՝ ականատես լինելով»:

Համանման սխրանք է կատարվել 1918- ի մայիսի 24-28- ին Սարդարապատում: Այդ ճակատամարտը կոչվել է երկրորդ Ավարայր:

Մնացյալը շարադրելու է մասնակիցը:

2. Մովսես Խորենացին Ոսկեդարի ամենանշանավոր դեմքն է: Նրա արժեքը գիտակցվել է և՛ իր ժամանակակիցների, և՛ հետնորդների կողմից: Նա բնութագրվել է «տիեզերահռչակ», «քերթողահայր», «պատմահայր» պատվանուններով: Խորենացին հրաշալի կրթություն է ստացել Արևմուտքում և հայրենիք է վերադարձել 442- ին: Վերադարձից հետո Խորենացուն և նրա հետ եկածներին լավ չեն ընդունում. «տխմար և ինքնահավան» ուսուցիչները «իրենց համար չար օրինակ են դարձնում մեզ ծաղրելն ու արհամարհելը, իբրև անհաստատ և որևէ պիտանի արվեստից զուրկ: Ո՛վ պետք է նրանց պապանձեցնի՝ սաստելով և մեզ սփոփի՝ գովելով և չափ դնի խոսքի ու լուրջան»։ Նա ճգնում է Սյունիքի քարայրներում, նրան սուտ ու տգետ արեղաներն են հալածել, նրա գրքերը ծուռ ու մոլոր կոչել: Նրան թաքստոցից հանում և Մայր աթոռում եպիսկոպոս է ձեռնադրում իր դասընկեր Գյուտ կաթողիկոսը: Շուտով Հայաստանի մարզպան Սահակ Բագրատունին նրան պատվիրում է գրել հայոց ամբողջական պատմությունը, որն էլ սիրով հանձն է առնում Պատմահայրը, և ծնվում է մեր ժողովրդի ծննդյան վկայականը՝ «Հայոց պատմությունը»՝ ամենաստույգ պատմությունը հայ ժողովրդի:

Մնացյալը՝ մասնակիցը:

3. Ասույթի հեղինակը 5- րդ դարի պատմիչ Ղազար Փարպեցին է Այն ասվել է երկրի մարզպան Վահան Մամիկոնյանին, երբ նենգ ու չարախոս կղերականները ամբաստանում են պատմիչին, և նա հեռանում է հայրենիքից: Նա գրում է իր նշանավոր «Թուղթը»՝ ուղղված մարզպանին, և մարզպանը հասկանում ու ներում է նրան ու հետ

կանչելով՝ հանձնարարում գրել «Հայոց պատմությունը»: Այդ հերոսը Վահան Մամիկոնյանն էր, ում մասին Փարպեցին խոսում է իր մատյանում՝ հատկապես 3-րդ դրվագում, որը նվիրված է 481-484 թթ. Վահանաց պատերազմին:

4. Առակը փոքրածավալ արձակ կամ չափածո ստեղծագործություն է, որն իրականությունը ներկայացնում է այլաբանորեն և ավարտվում է բարոյախրատական եզրակացությամբ: Ի սկզբանե այն եղել է բանահյուսական ժանր, ապա դարձել է նաև գրական ժանր: Հնագույն առակագրության ամենախոշոր դեմքը հույն առակախոս Եզոպոսն է (Ք.ա. 6-րդ դար), որին անվանել են «առակագրության Հոմերոս», «յոթ իմաստունների գրուցակից»:

Միջնադարում՝ 12-13-րդ դարերում, հայ առակագրության խոշորագույն դեմքերն են Մխիթար Գոշը և Վարդան Այգեկցին:

Առակներ գրել են Խաչատուր Աբովյանը, Հովհաննես Թումանյանը, Ավետիք Իսահակյանը, Աթաբեկ Խնկոյանը, Մկրտիչ Կորյունը, Հովհաննես Շիրազը և այլք:

Մենաբանի՛ր Շիրազի «Մարգարիտն ու փրփուրը» առակը: